

Ն Ե Ր Տ ա ր ի

* Ո՛ր հայր ինն զծուխ ծխանի եւ զառա
ւօսն Նաւասարդի . զվազելն եղանց
եւ զվազելն եղչեաւաց . մեք փող
հարուստ եւ քնիկի հարկանեալ :



Ո՛ր, ո՛վ մարգիկ, ըշտապում էք խուճներաւ եւ հապճեպով,
Ո՛ր էք վազում՝ ձեռներովդ լի մայր ընդութեան տուրքերով,
Խաւասարդի մէկն է այսօր եւ զընում էք տօնելո՞ւ
Միտք ու ծաղկով չըքից տօնը Ամենատուր Աստըծու:
Հայ աշխարհի բնութիւնն հարուստ, դաշտորայքն են ծաղկազարդ,
Այգիները խաղողով լի, հողն արգաւանդ եւ պարարտ:
Եւ դուք, չընող հայ աղջիկներ, ծաղիկներին այդ սիրուն՝
Պրսակներ էք բոյսրելու Ամենատուր ձեր տիրուն .
Թէ քնքուշիկ ձեր մատ երով ածելո՞ւ էք լիութի
Ձեր սիրասուն եղբայրների բաժակներում հին դինի .
Թէ սեղա՞ն էք պաշտօնառելու Ամենատուր Աստըծուն,
Որ նա սփռի իր հովանին ձեր բարեբեր տրտերում .
Ածէ՛ք, քոյրեր, ահա եկան ձեր եղբայրները յոգնած,
Զխաղաւիղ, մրցումներին՝ հանգստութեան կտրօտած .
Կողողուլեցէք ձեր տաք չնչով դուք նրանց խոնջ բազուկներ,
Տըւէք նրանց, տըւէք դինի, տըւէք եւ քաղցր համրոյրներ,
Որ Աստուածն էլ Ամենատուր, խընամակալն հայ երկրի,
Տեսնելով ձեր ուրն անարատ՝ հողով ցնծայ եւ բերկրի:
Երգիները հայ աշխարհի՝ տազանդաւոր ու համեստ՝
Հին գեղապանց մեծ գործերին անվերջ կարգում են գովեստ .
Եկելու մն նրանք իրանց երգում անուննր հայկ ու Արամ,
Տիգրան, Վահագն ու Արուսէյս եւ դ՝րանց փառքն անխառն .
Տուր են տալիս Ամանորի հայրենաւանդ հին տօնին,
Եւ գովում են տօնն ովքեր հայրենեաց հետ կապ ունին .
Փովում են նրանք հայրենասէր քաջ պիւտուրին անձնուէր,
Հայ տանտիկնոջ, հայ պատանուն, հայ մըշակին ջանասէր .
Եւ երգելով փառք ու պատիւ Ամենատուր Աստըծուն՝
Հայ աշխարհի բնութեան համար նրանց խընամեք են հայցում,
Հա՛յ աղջիկներ, պըսակեցէք դուք ճակատն հայ երգողի,
Որ յախտան նա իր երգում ձեր անունը ներթողի:

Արեգալը հորիզոնում փողփողում է աթաղին,

digitised by A.R.A.R.@

Եւ մրդերով չըջապատուած կարծես ժպտում է բազինն
Ուր քրմերը միաբերան երգում են փառք ու պատիւ
Ամենատուր մեծ Աստուծուն Ամանորի այս առթիւ :
Եւ խըմում են մարդիկ գինին բաժակներով լիելու
Եւ առում են եւ պարում են խմբովին եւ մի առ մի :
Գրմապետը ձայն է տալիս գինու բաժակը ձեռին :
« Հա՛յ ժողովուրդ , երկրպագի՛ր գու ջո տիրոջ պատկերին :
« Սա՛ , առում է , քեզ պարզեւեց պայծառ երկինք , յորդ անձրեւ ,
« Սա՛ խընայեց քեզ կարկուտից , ծաղեց քեզ լոյս ու արեւ » :
Եւ ժողովուրդը գոչում է՝ բազուկները տարածած :
« Օրհնեա՛լ լինի Ամենատուր Աստուածը մեր միշտ գրիւած » :
Եւ քրմերի զսասկարգից մի երկրորդ մեծ պաշտօնեայ
Ջախ է տալիս՝ ձեռին բռնած գինու բաժակը ոսկեայ :
« Հաւատարիմ Հա՛յ ժողովուրդ , կրօնասէր , ջերմեանդ ,
« Այս էլ քամնք քո՛ իսկ կենաց , որ հինաւորց այս աւանդն
« Անխախտ պահես եւ գարեբով ժառանգութիւն միշտ թողնես
« Ջառակներիդ , որ նըրանք էլ դան կատարեն այս հանդէս :
« Վո ախարհ , Հա՛յ ժողովուրդ , կանգուն միշտ յաւիտեան ,
« Կանգուն մընայ ըս տունն ու տեղ , քո այգին ու անդամասուն :
« Եւ ինչպէս քո հողի վըրայ բուսած ծառերն ու ծաղկունք՝
« Մ՛նաս եւ դու մշտադաւար , չը տեսնես ցաւ ու տրտուհնք » :
Լըռեց ճառը պերճախօսի , միաբերան ձայն տըին :
« Կեցի՛ցէ՛ յաւէտ մեր վի՛հ կրօն , որ մեր նախնիք մեզ թողին » :
Եւ խանդավառ բերկրանքով լի՝ նոքա համբոյր տուին միմեանց՝
Գաջ համոզուած թէ կըրօնն այդ մընալու էր միշտ անանց :

Անդան օրեր , կործանուեցաւ հայ բազինը հընօրեայ :
Բայց ո՛չ երբեք ժողացուեցաւ ճոխ պաշտամունքը նորա :
Տասնեակ դարեր երկարածիդ կատարուեցաւ շարունակ
Հայ աշխարհում Ամանորի սոյն հանգէսը փառաճառի :
Դարեր երկար ու անընդհատ հայ կոյսն ու հայ պատանին
Պճնըւեցան պըսակազարդ՝ Ամանորի այս առթին :
Մոռանում էր հայ մըլակը իր քրտինքն ու տառապանք ,
Ողջունելիս նորեկ տարուն ըստանում էր եւ նոր կենք :
Կազդաւրուում էր հայ զինուորը պատերազմում վատաւարի ,
Ուրախ էր հայ ընտանիքը իր սրբալիկամբ հոգակուած :
Ուրախ էր եւ հայ տէրտէրը , յաջորդը հին քրմերի ,
Թէպէտեւ ոչ մեծ գիտնական բայց հաւատքուն անթերի :
Եւ երգիչը հայ աշխարհի անցեալի պօլքն էր կարդում
Եւ ամբոխից գեւեցազնական զափններով պըսակուում :

Անցան սակայն , անցան անգարձ եւ ա՛յդ դարերն երջինիկ ,
Եւ տեսնում եմ այժմ իմ առաջ մի սըղաւոր հայրենիք :
Նա հեծում է , նա ողբում է հարուածներից օտարի ,
Ասպարէզ է վատել տըխուր՝ հալածանքի , աւարի :

Հայածուռւմ է հայ տէրտէրը՝ հաւատարիմ իր կոչման ,
 Հայածուռւմ է հայ տաճարը իր զարդերով սրբազան ,
 Հայածուռւմ է հայ պատանին երկրէ երկիր տարազիր ,
 Հայածուռւմ է հայ մըշակը իր որդւոց հետ սրգակիր ,
 Հայածուռւմ են մատաղանս եւ որբացած հայ մանկունք ,
 Չունին նորանք հայր ու մայրիկ , անվերջ թափում են արտասուք ,
 Հայածուռւմ է եւ պատիւը պարկեշտաւուն հայ կոյսի ,
 Էլ տէրը չէ նա սիրտուն , քաջ , արդամարդ իր փառի ,
 Վերացել է հայ աշխարհից ե՛ւ սրբութիւն ե՛ւ ամօթ ,
 Պատուաճանաչ մարդիկ այնտեղ մահուան քաջում են կարօտ ,
 Որոացուել է Ամանորի պաշտամունքը ցնծալից , —
 Ա՛խ , ո՞վ կարող է աչք բանալ այլ եւս արիւն արտօսելից , —
 Եւ երբեքը հայ աշխարհի՝ մրտալ թախիծը դէմքին՝
 Պատմում է իր հայրենիքի ցաւն ու վիշտը ամէնքին ,
 Այսարհնե՛ր է թափառում նա , կտրում է ծով , ովկէան ,
 Որ իր ողորով ու երգերով քար սիրտն յուզէ մարդկութեան :

Օ՛հ , սիրելի՛ հայ աղջիկներ, եւ դուք, Հայո՛ց պատանիք ,
 Թէ սիրում էք , որ նորոգուի ձեր կիսաւեր հայրենիք ,
 Թէ սիրում էք , որ դարերով անմահ մընայ ձեր անուն ,
 Ուխտեցէք արդ նորան մի օր զոհել ձեր սիրտն ու արիւն :

Դաւրեժ

ՄԵՍՐՈՊ Վ. ՄԱԿՍՈՒՏԵԱՆ



Մայրութեան յաղթանակը

(Նուեռ հայ մայրերին)

I.

Հայածուռւմ էր Հրէութիւնը եգիպտոսում :
 Երկու հարիւր տարուց աւելի էր անցել այն
 ժամանակից , երբ աշուտը սովր պաճառում էր
 աւեր դարձնել եգիպտոս , եւ երբ Յովսէփ իր
 հետաւեւ մտքով գլուշացոյց Փարւոնին պայտ
 ու պատշաճ միջոցներ-նախաճողութիւններ ձեռք
 առնելու ու սովի դէմ պայապահուելու :

Մտացել էին Յովսէփի ժաշան գործունէ-
 ութիւնը , յետմարանների կառուցումը , առա-
 տութեան տարիներում հաց ամբարներ , սովի

տարիներում ժողովրդին հաց բաշխելը , սովից
 ազատելը : Մոռացուել էին նաեւ Յովսէփի շի-
 նած չրանդը եւ սրա մատուցած անգնահատելի
 ծառայութիւնները :

Հրէական ազգն իր խաղաղ զարգացումով ,
 իր աշխատարութեամբ , իր ընտանեկան բար-
 գաւաճութեամբ , իր բազմամիջութեամբ , իր
 մաքր արութեամբ , եգիպտական պարարտ հողի
 վրայ զօրացել էր ու առաջացել :

Տիրապետող տարբը՝ Նդիպացիք օր օրի
 վրայ նախանձով էին լցւում , ատելութիւնները
 կրկնապատկում ու բացարձակ բողոքի ու արժ-
 գոնութեան ձայնը էին իրենց չուրջը տարա-
 ծում , արքունիքը հասցնում ու սրա ուշադրու-
 թիւնը հրաւիրում :

Փարաւոնի արքունիքը անտարբեր չ'մնաց
 դէպի այդ ձայները , դէպի բողոքները : Հրա-
 հանգ հրահանգի յետեւից , հրաման հրամանի
 յետեւից սուղաղին մէկը միւսից խիստ , մէկը
 միւսից դաժան հրէական ազգի իրաւունքները
 կարճեցին , զարգացման առաջն առնելու մտա-
 ջով :

Եգիպտական կառավարութիւնն օր օրի վր-
 այ առաջանալով , պարզից իր նպատակը՝ իս-